7. Դատական ծախսերը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համասնորեն, իսկ համաձայն նույն օրենսգրքի 101 հոդվածի 1-ին մասի՝ դատական ծախսերը կազմված են նաև պետական տուրքից:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4 կետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով պետական տուրքը կազմում է բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Հայցվորի կողմից վճարվել է պետական տուրքի գումարը:

Հայցը բավարարման ենթակա լինելու պարագայում պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման նաև պետական տուրքի գումարը՝ 100000 ՀՀ դրամի չափով:

Այլ դատական ծախսերի միջնորդություններ չեն ներկայացվել:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.12. և 362-րդ հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Սմարթիմփայեր» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Վիճակագրական կոմիտեի՝ «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 27.03.2024թ. որոշման 23-րդ և 24-րդ կետերն անվավեր ճանաչելու և որպես հետևանքներ՝ Հայցվորի հայտը գնման ընթացակարգի պայմաններին բավարար գնահատելու, վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու և ՀՀ Վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.04.2024թ. «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 153-Ա հրամանը վերացնելու պահանջների մասին, բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ Վիճակագրական կոմիտեի «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2024/1» ծածկագրով բաց մրցույթի խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 27.03.2024թ. որոշման 23-րդ և 24-րդ կետերը և որպես հետևանքներ՝

- «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի համարել բավարար գնահատված և վերջինիս ճանաչել ընտրված /հաղթող/ մասնակից,

- անվավեր ճանաչել ՀՀ Վիճակագրական կոմիտեի գլխավոր քարտուղարի 08.04.2024թ. «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 153-Ա հրամանը:

2. ՀՀ Վիճակագրական կոմիտեից հօգուտ «Սմարթիմփայեր» ՍՊ ընկերության բռնագանձել 100000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am